Հարգելի ներկաներ,

Ձերդ գերազանցություններ, պարոնայք դեսպաններ, ողջունում եմ Ձեզ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում:

Այսօրվա մեր գիտական միջոցառումը խիստ կարևոր նշանակություն ունի: Քանզի այն բացի գիտական բաղադրիչից ունի նաև գործնական բաղադրիչ, այն է, էլ ավելի ամրապնդել հայ-իրանական բարեկամական հարաբերությունները:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական ուղղությունների մեջ իր ուրույն և կարևոր դերն ունի իրանագիտությունը: մեր հարևան ժողովրդի և պետության պատմության և մշակույթի ուսումնասիրությունը մեր Ինստիտուտի գիտական առաջնահերթություններից է: Այսօր մեզ մոտ հիմք դրված իրանագիտական դպրոցի բարի ավանդույթները շարունակվում են: Գիտական ուսումնասիրությունների հիման վրա տպագրվում են հոդվածներ, գրքեր, կազմակերպվում են գիտաժողովներ և պատրաստվում են նոր կադրեր:

Կարևոր է նաև մեր իրանագետների համագործակցությունը այլ գիտական կենտրոնների մասնագետների հետ: Ուրախությամբ պիտի նշեմ, որ այսօր աշխատաժողովին մասնակից են նաև «Օրբելի» վերլուծական կենտրոնի աշխատակիցները, ինչպես նաև, մենք ունենք ԱԳՆ-ից գիտաժողովին մասնակից և մասնակիցներ ՀՀ այլ արևելագիտական ու վերլուծական կենտրոններից:

Չնայած դիվանագիտական առումով ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև գյություն ունի 31 տարվա պատմություն, սակայն մենք չպետք է մոռանանք, որ մեր երկու ժողովուրդների, մեր երկու

պետությունների միջև այդ հարաբերություններն ունեն հազարամյակների պատմություն, որը խորքային, քաղաքակրթական մակարդակի վրա է:

Այնպես որ, ողջունում եմ և մեզ բարի և բեղուն աշխատանք եմ մաղթում:

Ռոբերտ Ղազարյան պ.գ.թ., դոցենտ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն